ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Հ. ՉԱՔՐՅԱՆ

Վերջերս Թուրքիայում լույս են տեսել մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են Փոքր Ասիայի էթնիկական պրոցեսների պատմությանը։ Հեղինակների կանխակալ հետևությունների, մտացածին ենթադրությունների վրա հիմնված այդ աշխատությունները գիտական արժեք չեն ներկայացնում, սակայն հետաքրքիր են այն առումով, թե թուրք գիտնականներն ինչպես են աղավաղում պատմությունը՝ ժխտելու համար ոչ թուրք էթնիկական ընդհանրությունների գոյությունը Թուրքիայի տարածքում։ Վերոհիշյալ աշխատություններում իշխում է այն կարծիքը, թե թուրքերը հնագույն ժամանակներից ի վեր բնակվել են այդ տերիտորիայում, սակայն ենթարկվելով հարևան ժողովուրդների, հատկապես հայ լուսավորչական և բյուզանդական ուղղափառ եկեղեցիների ազդեցությանը, աստիճանաբար «քրիստոնեացել են», ապա և կորցրել իրենց էթնիկական ինքնագիտակցությունը։ Տվյալ պրոցեսը, Մ. Ռրզայի մոտ, որի աշխատությունը հրատարակվել է 1982 թ. Թյուրքական կուլտուրայի հետազոտության ինստիտուտի կողմից, «բացատրվում» է համշենցիների օրինակով։ Հեղինակը, համարելով նրանց նախաթուրքեր, այսինքն՝ «խեթերի ժառանգորդներ», նշում է, որ համշենցիները քրիստոնեության ազդեցության տակ մի ժամանակ հայերեն են խոսել, սակայն հետագայում ընդունել են մահմեդականություն և վերադարձել հարազատ էթնոսի՝ թրքության գիրկը[1]։

Մ. Ռրզան, խեթերից ու համշենցիներից բացի, կամայականորեն «թուրքացնում» է նաև ուրարտացիներին, լազերին, Թուրքիայում ապրող վրացիներին, չերքեզներին, քրդերին, հայտարարելով նրանց թուրանական ժողովուրդներ[2]։ Հեղինակի այս միտումը ամենևին էլ ինքնօրինակ չէ. այն իր արտահայտությունն է գտել նաև Քադրի Ք. Քոփի (Սեվենգիլ) մոտ։ Վերջինս, նույն ինստիտուտի կողմից հրատարակված գրքում, որոնելով թուրքերի նախնիներին Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի հնագույն բնակիչների մեջ, գալիս է այն եզրակացության, թե էթնիկական այլ ընդհանրություններ Թուրքիայում առհասարակ չեն եղել[3]։ Այդ «տեսակետը» հաստատելու համար հեղինակը վկայակոչում է Անատոլիայի նախկին ու ներկայիս բնակիչների մարդաբանական գծերի նմանությունը և հայտարարում Թուրքիայի բնակչության ռասայական միասնության մասին։ Քադրի Ք. Քոփը մարդաբանական ընդհանրությունը պարզապես շփոթում է էթնիկականի հետ։ Նա թուրքեր է համարում նաև Փոքր Ասիայի տարածքի վրա ապրող հույներին[4]։ Ճիշտ է, աշխատության մեջ հեղինակը ոչ մի տեղ չի ընդգծում, թե հայերը նույնպես ունեն «թուրքական ծագում», պարզապես Ուրարտուն է անվանում թուրքական պետություն[5]։

---

[1] M. Rıza. Benlik ve dilbirliğimiz. Ankara, 1982, s. 35.

[2] *Նույն տեղում, էջ 9—10, 17, 35, 39, 47։*

[3] Kadri K. Kop (Sevengil). Araştirma ve düşüncelerim. Ankara, 1982, s. 45.

[4] *Նույն տեղում, էջ 46։*

[5] *Նույն տեղում, էջ 8։*

Պրոֆ. Ն. Սևինչը իր ընդարձակ հոդվածում, որը լույս է տեսել 1983 թ. «Թյուրքական աշխարհի ուսումնասիրությունների հանդեսում», գտնում է, որ թուրքերը, սկսած մ. թ. ա. 2300-ական թթ., ներթափանցել են Փոքր Ասիա և աստիճանաբար թուրքացրել այն[6]։ Հեղինակի կարծիքով, այն թուրքերը, որոնք սելջուկներից դարեր առաջ հաստատվել են այդտեղ, քրիստոնեություն ընդունելով հանդերձ՝ պահպանել են իրենց էթնիկական ինքնագիտակցությունը։ Սակայն նրանց և սելջուկների միջև եղած կրոնական տարբերությունը պատնեշ է հանդիսացել և խանգարել երկու ցեղակիցների միաձուլմանը։ Այդ իսկ պատճառով Փոքր Ասիայի նախկին թուրքերը, ըստ Ն. Սևինչի, սելջուկների հարվածների տակ «հայ փոքրամասնության» հետ միասին տեղափոխվել են Հյուսիսային Միջագետք[7]։ Ըստ երևույթին, ասում է հեղինակը, նրանց զգալի մասը ընդունելով իրենց բախտակիցների՝ հայերի դավանանքը, դարձավ լուսավորչական[8]։ Հենց այս տեսանկյունից էլ նա մեկնաբանում է թրքախոս հայերի գոյության փաստը Անատոլիայում։ Ենթադրվում է, նշում է Ն. Սևինչը, որ Գրիգոր Լուսավորիչը պարթևական ծագում ունի, այսինքն թուրք է, «համենայնդեպս,— շարունակում է նա,— մենք կգուշություն ցուցաբերենք և հետո միայն ասենք, որ եթե լուսավորչական եկեղեցու հիմնադիրը թուրք է, ապա թուրք պետք է լինեն նաև վերոհիշյալ թրքախոս լուսավորչականները»[9]։

Ն. Սևինչը առհասարակ ժխտում է հայերի և հույների գոյության փաստը, որպես առանձին էթնիկական ընդհանրություններ, ասելով, թե հույն հասկացությունը Անատոլիայում երբեք չի ունեցել էթնիկական պատկանելության իմաստ. պարզապես, ինչպես հայերը, այնպես էլ հույները իրենցից ներկայացրել են եկեղեցիների շուրջ համախմբված կրոնական համայնքներ[10]։ Հեղինակը մոռանում է, որ ժողովուրդների ազգային ինքնագիտակցությունը երկար ժամանակ ենթարկված է եղել կրոնականին, հատկապես այնպիսի մի պետության մեջ, ինչպիսին էր թեոկրատիկ Օսմանյան կայսրությունը, որտեղ բնակչությունը պաշտոնապես բաժանվում էր մուսուլմանների և ոչ մուսուլմանների։ Ազգերի ձևավորման պրոցեսը Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների մոտ թուրք պատմաբան Ն. Բերքեսի կարծիքով տեղի է ունեցել XIX դարի սկզբին[11]։

Նկատենք, որ Ն. Սևինչը հակասում է ոչ միայն փաստերին, այլև ինքն իրեն։ Նա Փոքր Ասիայի «ուղղափառ թուրքերի» մասին խոսելիս նախ նշում է, որ նրանց մոտ պահպանվել է էթնիկական ինքնագիտակցությունը, ապա ժխտում է այն և ասում, թե նրանք քրիստոնեացման հետ զուգընթաց կորցրել են թուրքական էթնիկական հատկանիշները, այդ թվում նաև լեզուն և վերջնականապես ձուլվել հույների հետ[12]։ Իսկ հայերի միջավայրում այդ թուրքերը, ըստ հեղինակի, յուրացրել են միմիայն լուսավորչական դավանանքը[13], պահպանելով, հավանաբար, իրենց թուրքական լեզուն։ Դրա ճիշտ հակառակը պնդում է պրոֆ. Մ. Էրոզը։

Մ. Էրոզի աշխատությունը կոչվում է «Քրիստոնեացած թուրքեր» (հրատարակվել է 1983 թ. Անկյուրայում, նույնպես Թյուրքական կուլտուրայի հետազոտության ինստիտուտի կողմից)[14]։ Ճիշտ է, այսպես կոչված «քրիստոնեացած թուրքերի» գաղափարը Մ. Էրոզին չի պատկանում (այդ մասին խոսել է

---

[6] Necdet Sevinç. Gaziantepte yer adları ve türk boyları, türk aşiretleri.— Turk dünyası araştırmaları 26, ekim, Ankara, 1983, s. 1—9.

[7] Նույն տեղում, էջ 9։

[8] Նույն տեղում։

[9] Նույն տեղում, էջ 10։

[10] Նույն տեղում։

[11] N. Berkes. Turkiyede cagdaşlasma. Ankara, 1973, s. 132--137.

[12] N. Sevinç. Gaziantepte..., s. 10.

[13] Նույն տեղում, էջ 9։

[14] M. Eröz. Hiristiyanlasan türkler. Ankara, 1983.

օսմանյան շրջանի վերջին պատմաբաններից Ամասյալը Հյուսամեդդինը[15] դեռ նախահանրապետական Թուրքիայում, ապա Հասան Ֆ. Թուրգալը Թուրքական պատմական ընկերության երկրորդ կոնգրեսում[16] և ուրիշներ), սակայն Մ. Էրոզի մոտ այն կատարելագործվում և տեսության է վերածվում։ Հեղինակի կարծիքով Թուրքերի ձուլման պրոցեսը միայն մինչսելջուկյան շրջանին բնորոշ երևույթ չէ, այլ շարունակվել է ինչպես սելջուկյան, այնպես էլ օսմանյան շրջանում։ «Հզորագույն երկու եկեղեցիների կործանարար ազդեցության տակ,— գրում է հեղինակը գրքի նախաբանում,— հույն կամ հայ թվացող բազմաթիվ Թուրքեր հետզհետե մուսուլման Թուրքերից հեռացել, քայլ առ քայլ մոտեցել են դեպի չար ճակատագիրը[17]»։ Եթե Թուրքերը անտարբեր են գտնվել, ոչինչ չեն ձեռնարկել իրենց ցեղակիցներին փրկելու համար, ապա քրիստոնեական եկեղեցիները, ասում է Մ. Էրոզը, շարունակելով իր միտքը, նրանց համար դպրոցներ են բացել, գրքեր հրատարակել և միսիոներական լուսն գործունեություն ծավալել[18]։

Մ. Էրոզը, ի տարբերություն վերոհիշյալ հեղինակների, վճռականապես մերժում և անհեթեթություն է համարում խեթերին, աքայացիներին, փյուգիացիներին, ուրարտացիներին, սկյութացիներին Թուրքերի հետ նույնացնելու փորձերը[19]։ Ինչպես հայտնի է, պանթուրքիստները ոչ միայն չեն ընդունում ծայրահեղ ավտոխտոնիստների տեսակետները, այլև բնութագրում են դրանք որպես խիստ վնասակար և Թուրքական իդեալների հետ բոլորովին անհամատեղելի իրողություններ։ Նրանք խիստ բացասաբար են վերաբերվում Թուրքերի վրա արտաքին ազդեցության ամեն տեսակի դրսևորումներին։ «Էթնիկական ինքնագիտակցությունը Թուրքերի մոտ,— գրում է պրոֆ. Մեհմեդ Ա. Այնին,— անչափ բարձր է եղել. դրա լավագույն ապացույցը հանդիսանում է այն բծախնդրությունը, որը նրանք ցուցաբերել են Թուրքական լեզվի և Թուրքական արյան մաքրությունը պահպանելու գործում»[20]։ Ամենևին էլ զարմանալի չէ, երբ պանթուրքիստները բացառում են Թուրքերի ձուլման հնարավորությունները մյուս ժողովուրդների հետ։ Հայտնի պանթուրքիստ Զեքի Վ. Թոգանի կարծիքով Թուրքերը կարող են զինվորական ծառայության մտնել բյուզանդացիների մոտ, քրիստոնեություն ընդունել, բայց ձուլվել հայերի և հույների հետ երբեք չեն կարող[21]։ Այս հարցում Մ. Էրոզը, բանավեճի մեջ մտնելով Զեքի Վ. Թոգանի հետ, գրում է. «Այն Թուրքերը, որոնք ապրել են հայկական համայնքի մեջ, բոլորովին կորցրել են իրենց, հայացել են։ Իսկ հույների հարևանությամբ ապրող քրիստոնյա Թուրքերը մի տեսակ տարակուսանքի մեջ են եղել. իրենք թեև «հույն» են անվանել իրենց, սակայն, ինչպես երևում է, այդ բանը նրանց սրտովը չէր»[22]։

Սակայն անհեթեթությունից չի խուսափում նաև ինքը՝ Մ. Էրոզը։ Մերժելով հանդերձ Ն. Սևինչի որոշ դրույթները, նա նույնպես հանգում է մինչսելջուկյան շրջանում «Անատոլիայի համատարած Թուրքացման» տեսակետին, այն տարբերությամբ, որ Մ. Էրոզի մոտ Թուրքերի ներթափանցումը Անատոլիա սկսվում է VI դարում[23]։ Դա բոլորովին էլ պատահական չէ. սա այն տեսակետն է, որի հիման վրա հեղինակները կարողանում են թրքախոս քրիստոնյաներին որպես Թուրքեր ներկայացնելու փորձեր կատարել։ Եվ իզուր չէ, որ Մ. Էրոզը աշխատության երկու գլուխները, մասամբ նաև ներածությու-

15 Տե՛ս նույն տեղում, էջ 54։

16 Turgal H Fehmı. Mülga seriye mahkemeleri sicilleri üzerine incelemeler, II Turk tarih kurumu kongresi zabitnameleri. Istanbul, 1943.

17 M. Eröz. Hıristiyanlasan..., s. V.

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, էջ VIII, IX։

20 M. A. Aynı. Milliyetcilik. Istanbul, 1946, s. 70.

21 Z. V. Togan. Umumi turk tarihine giris. Istanbul, 1946, s. 199.

22 M. Eröz. Hıristiyanlaşan..., s. 18.

23 Նույն տեղում, էջ 17, 18։

թյունը, ըստ Մ. Էրոզի, դարերի ընթացքում երկրաշարժերի, համաճարակների և հարատև պատերազմների հետևանքով ոչնչանում, անընդհատ նվազում, նոսրանում էր, մինչդեռ քոչվորական ապրելակերպի շնորհիվ թուրքերը միանգամայն խուսափում էին այդ աղետներից[24]։ Եթե հավատալու լինենք հեղինակին, ապա պետք է ստացվի, որ այդ երկրի բնակչությունը նախասելջուկյան շրջանում բաղկացած էր հոգևորականներից և քրիստոնյա քոչվոր թուրքերից։

Թուրքերի ներթափանցումը ժամանակակից Թուրքիայի տարածքը սկսվել է սելջուկյան նվաճումից առաջ, բայց նրանք քանակապես եղել են շատ չնչին և եղել են գերազանցապես վարձկան զինվորներ։ Իրավացի է թուրք պատմաբան Դ. Ավջըօղլուն, երբ գրում է. «... անհերթություն է պնդել թուրքերի գոյության մասին Անատոլիայում սելջուկներից առաջ»[25]։ Թուրքերի զանգվածային ներթափանցումը Անատոլիա սկսվում է սելջուկներով՝ XI դարի երկրորդ կեսին։ Այն մեծ չափերի է հասնում XIII դարում, երբ հսկայական քանակությամբ թյուրքական ցեղեր մոնղոլների ճնշման տակ քոչում են Անատոլիա։ Հենց այդ ցեղերն էլ, Օ. Թուրանի կարծիքով, նպաստում են տվյալ տարածքի թուրքացմանը[26]։ Նույն միտքն է արտահայտում Զեքի Վ. Թոգանը։

Ինչ խոսք, թյուրքերի զանգվածային ներթափանցումը XI—XIII դդ. գնոսս Անատոլիայի թուրքացում չի նշանակում, այլ պարզապես այդ պրոցեսի հիմքն է դրվում. բնակչությունը աստիճանաբար իսլամանում է, քաղաքների, գյուղերի և այլ բնակավայրերի տեղանունները՝ թուրքանում, թուրքերեն լեզուն հետզհետե տիրապետող է դառնում, իսկ նստակյաց բնակչության այն հատվածը, նշում է Դ. Ավջըօղլուն, որը դեռ շարունակում էր դավանել քրիստոնեություն, մասամբ հարկադրված հրաժարվում է մայրենի լեզվից և անցնում թուրքերենի[27]։ Եվ այնուամենայնիվ Մ. Էրոզը գրում է. «Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ նրանց մի մասը հունարեն կամ հայերեն, իսկ մյուս մասը թուրքերեն է խոսում»։ Եվ հեղինակը «գտնում է» ելքը, կրկնելով հայտնի հայատյաց թեզը. «... պետք է ընդունել, որ հուն և հայ համայնքների մեջ ապրող թուրքախոս քրիստոնյաները ունեն թյուրքական ծագում»[28]։ Ըստ ամենայնի շինծու և զավեշտական տեսակետ։

Այսպիսով, վերոհիշյալ աշխատությունները հաստատում են այն համոզմունքը, որ պատմագրությունը թուրք հեղինակների համար ունի ոչ թե գիտական, այլ քաղաքական նշանակություն։

К ВОПРОСУ ОБ ЭТНИЧЕСКИХ ПРОЦЕССАХ В МАЛОЙ АЗИИ

А. А. ЧАКРЯН

Резюме

Фальсификация этнополитической истории народов Малой Азии и Армянского нагорья в турецкой историографии с целью отрицания существования нетюркских этнических общностей—явление не новое. В статье критикуются некоторые современные турецкие издания, в которых делаются попытки широкой пропаганды антинаучных взглядов турецкой официальной историографии.

---

[24] Նույն տեղում, էջ X։

[25] D. Avcıoğlu. Türklerin tarihi. C. I, Istanbul, 1978, s. 143.

[26] O. Turan. Selçuklular zamanında Turkiye, Selcuklular ve islamiyet. Istanbul 1971, s. 57.

[27] D. Avcıoğlu. Turklerin..., s. 45.

[28] M. Eröz. Hıristıyanlaşan.., s. 28—29.